



Melkonian Alumni & Friends

P. O. Box 223

La Verne, CA 91750 U.S.A.

Tel. (949) 855-2015 • Fax (909) 593-6079

Website: [www.melkoniannews.org](http://www.melkoniannews.org) Email: [admin@melkoniannews.org](mailto:admin@melkoniannews.org)

Պրն. Վարդգես Մահտեսեան

Յունիս 11, 2011

Կիպրոսի Հանրապետութեան Խորհրդարանի  
Կիպրահայ Համայնքի Ներկայացուցիչ

Յարգարժան Պրն. Մահտեսեան,

Կիպրոսի Խորհրդարանին՝ Կիպրահայ Համայնքի Ներկայացուցիչ Ձեր վերընտրուելուն ուրախ առիթով հաճեցէք ընդունիլ մեր Գալիֆորնիայի Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան ջերմ շնորհաւորութիւնները եւ լաւագոյն մաղթանքները: Արդարեւ, Դուք արժանի էք այդ պատիւին եւ մենք կը հաւատանք որ Ձեր հմուտ եւ հեղինակաւոր ներկայացուցիչի հանգամանքէն Կիպրոսի Հայ գաղութը մեծապէս պիտի օգտուի:

Մելգոնեան Կրթ. Հաստատութեան առնչութեամբ Ձեր կատարած աշխատանքները մեր կողմէ միշտ արժանացած են բարձր գնահատանքի, Ձեզի հետ գործակցիլը յիրաւի հաճոյք եղած է մեզի համար: Արդ, կ'ակընկալենք եւ յուսով ենք յառաջիկային եւս Ձեզի հետ համատեղ աշխատանք տանիլ՝ Մելգոնեանի վերաբացման կապակցութեամբ:

Անգամ մը եւս, սրտագին շնորհաւորութիւններ՝ խորհրդարանական ընտրութիւններուն Ձեր տարած փայլուն յաղթանակին համար:

Յարգանքով՝

Րաֆֆի Յնձայեան

Ատենապետ

Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութիւն

Լոս Անճելըս